

Բ Ե Ջ Մ Ե Ա Լ Գ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԵԱԿԱՆ, ՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԵՒ ԲՆԵԱՍԻՐԵԱԿԱՆ

ԳԻՏԵԼԱԵՐՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 13.

1844

ՅՈՒՂԻՍԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ստորագրողի անունը :

ԵՐԿՐՈՐԻԱԿԱՆ կարգի հողերուն մէջ խաւ՝ մը կայ, որ կ'ըսուի կոպիճ՝ կարմրագոյն կամ բազմագունի՝¹ 1839²ն ատենները աս խաւին մէջ գտնուեցան կենդանեաց ոտնատեղիք տպաւորուած : Երբնց ամենուն ալ ընդհանուր ձևերը իրարու նման են՝ հինգ հինգ մատով ու թաթի ձևով, բայց մեծութեան կողմանէ այլապէս ամենէն մեծին երկայնքը ութ բթալափ է, լայնքը հինգ : Երբնք ետեւէ ետեւ անանկ շարուած են, և ան դիրքով կեցած՝ որ յայտնի կ'երևնայ թէ կենդանւոյն քալելու ատենը տպաւորուեր են : Եկ գիտնալիքն ալ աս է որ խոշոր ոտնատեղեաց մէջտեղը մանրներ ալ կան՝ նոյն շտկութեամբ շարուած . ուստի մէկ ճամբու և մէկ գծի վրայ շարուած կը տեսնուին մանր ու խոշոր ոտնատեղիք : Եկէ կարծեցին երկրաբաններէն ոմանք՝ թէ երկու ոտքով կենդանեաց ոտնատեղի է . ոմանք ալ թէ անանկ կենդանւոյ մը, որուն երկու ոտքը պզտիկ ու երկուքը մեծ ըլլան : Իսկ Վաւի՝ բնա-

գէտը ասոնց ձևը զննելով՝ կըսեպէ թէ տեսակ մը պարկաւոր կենդանեաց ոտնատեղիք են, որոնց ցեղը հիմա բոլորովին կորսուած է . վասն զի աս տեսակ կենդանեաց ետեւի ոտուրները աւելի մեծ են քան թէ առջևինները :

Երբ գտնուին իրեք մատով ոտնատեղիք ալ, ամէնը իրարու նման, որոնց շարուածքը մէկ գծի վրայ ետեւէ ետեւ է, և ամէնն ալ իրարմէ հաւասար հեռաւորութիւն ունին : Տարակոյս չկայ թէ ասոնք թռչնոց ոտնատեղիք ըլլան . բայց թէ ինչ տեսակ թռչնոց՝ չգիտցուիր :

Երբ դիպուածներէն կ'երևնայ որ կարմիր կոպիճը ձևանալու ատենը կակուղ է եղեր, որ կենդանիները վերան քալելու ատեն ոտքերուն կոխուածքը խոր մնացեր է, և ետքէն հողին ամբողջ խաւը քարանալով, ոտնատեղեաց ձևն ալ անփոփոխ մնացեր է ինչուան աս օրս :

1 Գ.Բ. :

3 Kaup.

2 Գ.Ղ. Grès rouge, կամ Grès bigarré.